«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

8 Սեպտեմբերի 2023, N 2 - 1

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով **«2023-2024 ուսումնական տարվա առկա ուսուցման բակալավրիատի և առկա ուսուցման մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ.Ա.Նազարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ընդունող հանձնաժողովը գործել է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հաստատած կանոնակարգերի և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հաստատած կարգերի պահանջների համաձայն: Առկա ուսուցման մագիստրատուրայի ընդունելության գործընթացի կազմակերպման նպատակով ընդունող հանձնաժողովը ձևավորել է դիմում հայտերի ընդունման առցանց հարթակ, իսկ արտաքին կապերի դեպարտամենտը դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու նպատակով ձևավորել է ՀՊՏՀ դիմորդի օգտահաշիվներ սոցիալական ցանցերում, ինչպես նաև դիմորդների համար նախատեսված տեղեկատվական հարթակներ ՀՊՏՀ կայքէջում:

Ըստ ընդունելության պլանի՝ ՀՊՏՀ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 1195 տեղ, որից 76-ը՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար), 1119-ը՝ բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (այսուհետ՝ վճարովի): Առկա 1195 տեղերին դիմել է 1720 դիմորդ, որից անվճար և վճարովի ուսուցման համակարգերում ընդունվել են 1232-ը (այդ թվում՝ արտոնություններով և սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով):

ՀՊՏՀ-ն պահպանել է ՀՀ բուհերի բակալավրական կրթական ծրագրերին դիմորդների մասնագիտական կողմնորոշման բնագավառում 2020-2021 ուսումնական տարվանից գրանցած իր 2-րդ դիրքը:

Ըստ ընդունելության պլանի՝ Գյումրու մասնաճյուղի առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 135 տեղ, որից 11-ը՝ անվճար, 124-ը՝ վճարովի: Առկա 135 տեղերին դիմել է 156 դիմորդ, որից անվճար և վճարովի ուսուցման համակարգերում ընդունվել են 125-ը:

Ըստ ընդունելության պլանի՝ ՀՊՏՀ առկա ուսուցման մագիստրատուրային հատկացվել է 635 տեղ, որից 85-ը՝ անվճար, 550-ը՝ վճարովի: Առկա 635 տեղերին դիմել է 433 դիմորդ, որից անվճար և վճարովի ուսուցման համակարգերում 1-ին փուլով ընդունվել են 313-ը, իսկ 2-րդ փուլով 92 դիմորդներից վճարման թույլտվություն են ստացել 78-ը: Առկա ուսուցման մագիստրատուրա ընդունված ուսանողների 69%-ը սովորել են ՀՊՏՀ բակալավրիատի միևնույն կամ հարակից մասնագիտություններով՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 4 տոկոսային կետով, իսկ 31%-ը՝ այլ բուհերի շրջանավարտներ: ՀՊՏՀ բակալավրիատից ՀՊՏՀ մագիստրատուրա անցումը կազմել է 24% (նախորդ ժամանակահատվածից շուրջ 5%-ով ավելի):

Ելնելով վերոգրյալից՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. 2023-2024 ուսումնական տարվա ընդունող հանձնաժողովի աշխատանքը գնահատել **բավարար**:
2. Հանձնարարել մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող բոլոր ամբիոններին՝ 20-օրյա ժամկետում մշակել իրենց մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ բակալավրիատի ուսանողների իրազեկման և մասնագիտական կողմնորոշման խթանման միջոցառումների հստակ ժամանակացույց (2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատված)՝ գովազդատեղեկատվական նյութեր, դասավանդողների, հատկապես հրավիրյալ դասախոսների վերաբերյալ տեղեկատվական նյութեր ՀՊՏՀ կայքէջում զետեղելու և բակալավրիատի ուսանողների շրջանում տեղեկատվական հանդիպումներ կազմակերպելու համար:
3. Հանձնարարել շարունակական կրթության բաժնին՝ մշակել և մինչև 2023 թվականի դեկտեմբերի 15-ը հաստատել ՀՀ ՆՄՄԿ հաստատություններ և ավագ դպրոցների 10-րդ ու 11-րդ դասարաններ մասնագիտական կողմնորոշման այցելությունների և ՀՊՏՀ բաց դռների օրերի ժամանակացույցները, իսկ մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ մշակել նմանատիպ այցելությունների մարքեթինգային և գովազդային աջակցման միջոցառումների պլան:
4. Հանձնարարել տնտեսագիտության տեսության, մակրոէկոնոմիկայի և ֆինանսների ամբիոններին և ուսումնական բաժնին՝ ուսումնասիրել «Տնտեսագիտություն» և «Ֆինանսներ» մասնագիտությունների կրթական ծրագրերից շրջանավարտների դեպի մագիստրատուրա անցման ցածր տեսակարար կշռի և 2020-2021, 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների համեմատությամբ դրա էապես կրճատման պատճառները:

5. Հանձնարարել որակի ապահովման բաժնին և շարունակական կրթության բաժնին՝ մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը ուսումնասիրել բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կուրսերի ուսանողների՝ ՀՊՏՀ դիմելու (մասնագիտական կողմնորոշում) դրդապատճառները՝ արդյունքները ներկայացնելով մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժին 2024-2025 ուսումնական տարվա ընդունելության գործընթացի մարքեթինգային աջակցման ծրագրերի հստակեցման համար:
6. Հանձնարարել ամբիոններին՝ մշակել համատեղ կամ կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրեր՝ արտաքին գործընկերների որոնման աշխատանքներում ներգրավելով արտաքին կապերի դեպարտամենտին:
7. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. սեպտեմբերի 8
Երևան